

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդով Միքը կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍՏԱՆԸ (Բաբոնսկայա և Բաղրամյան փողոցների անկիւնում) Թիֆլիսում:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դատարաններէն տրված պատիժները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գորոց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Կ. Պոլսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւ գաւառի մի քանի գիւղեր.

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԻՇՆԵՐԸ

Մեր դատարանները դատաւարութեան իրանց նշանակվող պատիժների վերաբերմամբ մինչև այժմ զանց են առնում մի կէտ, որը պայմանաւորվելով մարդասիրական հայեացքով յանցաւորի վրա, վաղուց է արդէն գործադրվում է ամբողջ եւրոպայում, ընդունված լինելով թէ թէօրիայի մէջ և թէ դատաստանական պրակտիկայի մէջ: Գանցաւորին պատիժ նշանակելու ժամանակ եւրոպական դատաւարութեան իւրաւաբանական և բարոյական հայեացքը մասամբ տարբերվում է մեր, Ռուսաստանի

դատաստանական հայեացքից պատժի վրա: Ահա ինչու է հարցը: Մի օր է և անհատ, որը կասկածվում է մի քանի անգամ յանցանքի մէջ, կալանաւորվում և բանտարկվում է: Սկսվում է սկզբնական դատաստանական քննութիւնը, որը շարունակվում է ամիսներ, շատ անգամ տարիներ: Վերջապէս գործի քննութիւնը դատարանում նշանակվում է և մեղադրվածը դատաւարութեան է օր է և պատժի, օրինակ բանտարկութեան, աքսորի և այլն: Բայց դատարանը մեղաւորում, պատիժը որոշելու ժամանակ, երբեք աչքի առաջ չունի, իր վճիռը կայացնելու ժամանակ նկատի չէ առնում որ մարդը սկզբնական քննութեան տեղափոխման ժամանակ արդէն նստած է եղել բանտում զիցուք երկու տարի: Ուրեմն այդ երկու տարին մարդը զրկված է եղել անձնական ազատութիւնից, բանտարկված է եղել ուրեմն մասամբ պատիժ է կրել արդէն իր գործած յանցանքի համար: Կիցուք գործը վերջանելուց յետոյ մարդուն դատաւարութեան են երեք տարվայ բանտարկութեան և ապա

աքսորանքին 8 տարով: Արդարութեան, անկողմնապահութեան, մարդասիրութեան զգացմունքը, նոյն իսկ դէպի յանցաւորը, կը պահանջէր այս դէպքում հետեւեալ կերպով կայացնել վճիռը. որովհետեւ մարդը արդէն 2 տարի նստած է եղել բանտում, ուրեմն 2 տարվայ պատիժը կրել է, իսկ նա դատաւարութեան է այժմ 3 տարվայ բանտարկութեան և 8 տարվայ աքսորանքին, ուրեմն դուրս գալով նրան նշանակված բանտարկութեան տարիների թիւից նրա արդէն կրած 2 տարվայ բանտարկութիւնը, այսուհետեւ բանտարկել նրան դարձեալ 1 տարով և ապա ուղարկել նրան Սիբիր 8 տարով:

Բայց ոչ. դատարանը այդպէս չէ անում: Ինչքան տարի էլ աւել սկզբնական բանտարկութիւնը, դատարանը հաշիւ չէ առնում յանցաւորի կրած բանտարկութեան ժամանակամիջոցը, կարծես թէ նա մեղաւոր է և դատարանը դանդաղ կերպով էր անում սկզբնական քննութիւնը:

Այդ կողմից եւրոպական բոլոր երկիրներէ, մանաւանդ Գերմանիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի և Շվեյցարիայի դատաւարութեան հայեացքը, շուրջով այն մարդասիրական հայեացքների, որոնք հետզհետեւ մտնում են եւրոպական իրաւաբանութեան մէջ, նշանաւոր կերպով տարբերվում է մեր դատարաններում ընդունված պրակտիկայից:

Այնտեղ դատվողի, յանցաւորի, դատաւարութեան նախնական քննութեան ժամանակ կրած բանտարկութեան ժամանակամիջոցը անպատճառ հաշիւ է առնվում վերջնական դատաւարութեան ժամանակ որոշված պատժի տեղափոխման մէջ:

Եթէ յանցաւորը գործի քննութեան ընթացքում արդէն մի տարի բանտարկված է եղել, իսկ գործի վերջնական յետոյ դատարանը նրա գործած յանցանքի համար դատաւարութեան է նրան զիցուք երեք տարվայ բանտարկութեան.—արտասահմանեան դատարանը ուղարկութեան է

առնում յանցաւորի մի տարվայ կրած բանտարկութիւնը, հանում է այդ մի տարին դատաւարութեան ընդհանուր թիւից և այնուհետեւ կարգադրութիւն է անում բանտարկել յանցաւորին միայն երկու տարով:

Ձէ կարելի էր զարմանալ որ մեր ուսումնական իրաւաբանները, մեր պլ և պլ իրաւաբանական ընկերութիւններն ու հրատարակութիւնները մինչև այժմ չեն մտածել յարուցանել արդարութեան վրա հիմնված և ընդհանուր մարդասիրական սկզբունքին համապատասխան այդ անհրաժեշտ և եւրոպայում վաղուց արդէն զրական կերպով վճռված խնդիրը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՐՈՐԻՑ

Հոկտեմբերի 20-ին

Գորու հայ հասարակութիւնը ունի երկու եկեղեցական ծխական դպրոցներ, որոնց մէջ ուսանում են, ինչպէս և ամենայն տեղ, երկխաներ: Բայց չը նայած նրան, որ Գորու երկխաները տարբերով ուսումնարան են յաճախում, այնու ամենայնիւ այդ մայրենի ուսումնարանի աշակերտները հայերէն լեզուով չեն կարողանում խօսել առանց քերականական խոշոր սխալների. օրինակ. «Գորու պարոն Սեդրակ գնալու ես», կամ «Գնա ես առում ես» և այլ այնպիսի սխալներ, որոնք, ի հարկէ, հայտնուած քաղաքներում պարտէն չիմացող երեխաներն էլ չեն արտասանի:

Ձէ կարելի, ի հարկէ, և ուսուցիչներին այդ բանում մեղադրել, քանի որ յիշեալ երեխաների ծնողները ծիծ տալու օրից սկսած երեխայի մօտ մի բառ անգամ, բացի վրացերէնից, հայոց մայրենի լեզուով չեն զրուցած ու երեխան փոքր առ փոքր հասակ առնելով վրացերէն լեզուն իւրում են ջուրը և թողնում, որ տակը չորանայ:

Այս իրանք պարտադրանքիւ նպատակով են բացատրում. տակը չորանալուց յետոյ նորից բաց են թողնում ջուրը, լծացնում և այդպէս պահում մինչև հունձը:

Հարկատուները, լինեն աղքատ կամ հարուստ, հաւատար իրաւունքով օգտվում են հողից ու ջրից: Հարկատուների որոշման իրաւունքը ժողովրդին է:

Խրաքանչիւր գիւղ ամենայն տարի պարտական է դանձարանին նախօրէն որոշած գումարը հատուցանել. այդ որոշեալ գումարը հատուցանելու համար, ժողովուրդը ինքը բաժանում է գըլուխների, քանի զլին որ բաժանվում է թագաւորական հարկի գումարը, այնքան մասերի էլ բաժանվում է վարեւաճող վերոյիշեալ քուէարկութեան եղանակով:

Հարկատու դարձնել կամ գլուխների բաժանելը գանազան տեղերում գանազան եղանակներով է կատարվում: Օրինակ Նեմախապատ գիւղում, հարկատու դարձնելու միակ միջոցը հետեւեալն է: Պատանու կամ երիտասարդի պարանոցի բոլորագրած թիւով չափում են, ապա այդ երկարութեամբ կրկին աւելացնում. պարանոցի բոլորագրած այդ երկարութեամբ թիւը երկու անգամ, դրա՛յ այդ երկու անգամ մի ծայրը առաջնեւում բռնել են տալիս պատանուն կամ երիտասարդին, միւս միացած ծայրը վեր քաշում դէպի գլուխը. եթէ գլուխը անցնում է երկու անգամ թիւի միջով, հարկատու է դառնում. հակառակ դէպքում՝ ազատվելով հարկատուութիւնից, զրկվում է նաև հողի և ջրի իրաւունքից:

Միւս գիւղերում՝ Հաւարիկում, Քեւնդակում և այլն այդպէս չէ. այդտեղ ուղարկութեան է առնվում կեցութիւնը, ապրուստի միջոցը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԷՇ ԳԱՍԱՌԻ ՄԻ ԳԱՆԻ ԳԻՒՂԵՐ

Աղբաշից 25—30 վերտաշափ տարածութեան վրա գտնվում են հետեւեալ գիւղերը. Նեմախապատ (Մահմադ-աւաղ), Արեւ (հին Արեւի մի թաղը), Խաղաղ, կամ Երմանի-բաղար և կոչվում է), Մաղդու, Խանաւաղ, Հաւարիկ և Քեւնդակ: Այս գիւղերը իրանց դիրքով կլիմայով չինութիւնների ձևերով, բնակիչների (հայ և թուրք) պարագայութիւններով և պարագայութիւնների եղանակներով շատ նման են միմեանց. վարք ու բարքի, կեցութեան ու սովորութիւնների տարբերութիւնները աննշան են:

Ընդհանրապէս պարագայում են երկրագործութեամբ, այդեգործութեամբ և շերամապահութեամբ: Երկրագործութեան նիւթն է՝ ցորեն, գարի, չալտուկ և կորեկ. առաջին տեղը բռնում է ցորենը: Վարեւաճողը գլխաւորապէս տէրուհական են: Համեմատաբար աննշան տեղ են բռնում բէկերի ու կալուածատէրերի հողերը:

Խրաքանչիւր գիւղին տուած է որոշեալ չըջանագծով հող. գիւղապատկան վարեւաճող վերաբերեալ կարգադրութիւնները և ըստ յարմարութեան բաժան-բաժան անելը՝ վերապահված է իրան ժողովրդին: Ժողովուրդը—միմյան օգտվելու իրաւունքով—ըստ իր նախատեսութեան ծրարում է ապագայ անելիքը և ժամանակին ձեռնարկութեան գործին է դիմում: Ամբողջ ժողովուրդը մասնակցում է հողի բաժանման գործում. զիւ-

րում որքան հարկատու կայ, այնքան մասի է բաժանվում վարեւաճողի որոշեալ մասը:

Որոշեալ մասն եւ առում, որովհետեւ գիւղապատկան ամբողջ վարեւաճող միանգամից չէ գործադրվում. հողին հանդիստ տալու համար միշտ պաշար ունենում են: Հողի յատկութեանը ու տեղին նայելով կան տեղեր, որոնք 2—3 տարի շարունակ վարում են և ապա 1—2 տարի հանգիստ առնում. կան տեղեր, որոնք մի տարի վարվելով 2—3 տարի են հանգիստ առնում. կան նաև տեղեր, որոնք մի տարի վարվում, մի տարի հանգիստ են առնում: Այս ամենը ժողովուրդը նախատեսելուց յետոյ, որոշեալ ժամանակի համար որոշեալ մասն է ընտրում: Այդ մասը ընտրելուց յետոյ, համաձայն հարկատուների որքանութեան ու վարեւաճողի տարածութեան—պայմանական չափ է որոշվում իւրաքանչիւր գլուխին հարկատուին մաս տալու նպատակով:

Խրաքանչիւր հարկատուի տեղը որոշվում է քուէարկութեամբ: Հարկատուների թիւ համաձայն նախօրէն քուէներ պատրաստելով՝ գնում են վարեւաճողը. այդտեղ բոլոր քուէները մէկին յանձնելուց յետոյ, քուէների թիւով, միմեանց կողքի գծեր են նշանակում հողի վրա: Քուէապահը առանց դանդաղելու, ամեն մի գծի վրա քուէ է դնում: Քուէտէրերից իւրաքանչիւրը իսկոյն և եթէ գալիս կանգնում է իր քուէի մօտ:

Ինչպէս շարքով կանգնած են լինում, այնպէս էլ յարդղական հերթով բաժին են ստանում, ըստ լայնութեան կամ ըստ երկարութեան, որոշելով վարեւաճողի սահմանագծից. նախ՝ առաջին բարձր կանգնածը, յետոյ նրա երկրորդը, ապա երրորդը և այլն: Այսպիսով առաջ առնված է լինում այն իւրաքանչիւր գլուխին հարկատուի, որոնք բնականաբար ծնվում են

վարեւաճողի յարմարութիւնների ու անյարմարութիւնների համեմատութիւնից:

Այս ձևի քուէարկութիւնը—չփչգցելը, ինչպէս իրանք են անում, ամեն տարի կրկնվում է: Նոյնը տեղի է ունենում չալտուկի վերաբերեալ. չալտուկի տեղը այլ է. նա էլ առանձին քուէարկութեան է ենթարկվում: Ջուր կապելն էլ նոյնպէս քուէարկութեամբ է կատարվում: Վարերը ջրելու համար քուէարկվում է ընդհանուր առումի ջուրը միանգամից վերցնելու վերաբերմամբ, թէ երբ պիտի ջրէ: Քուէարկութիւնը վերոյիշեալ եղանակով որոշում է իւրաքանչիւրի հերթը: Քուէների համապատասխան կարգով յարկաբար քուէներուց յետոյ հերթը կրկնվում է: Իսկ չալտուկի ջուրը, որ շարունակ պիտի լինի, մասերի է բաժանվում: Չալտուկի ընդհանուր առումի առաջ մի հաստ գերան է գցած. գերանը համահասարակութեան է բաժանված. այդ կտրուածքներից ջուրը առուակների ցրվելով՝ գնում է մարդերը:

Չալտուկ վարել անհամեմատ ծանր աշխատանքներով է պայմանաւորվում: Այսինքն վերջերից սկսած մինչև սեպտեմբեր ամիսը շարունակ լինում է պահանջում 2—3 օր ջրի մէջ երկարութեամբ պահելուց յետոյ, քանում, խոտով ծածկում են մինչև ծլելը. այն ժամանակ, երբ ծլելի նշաններ են երևում, ցանում են. բայց նախ քան ցանելը՝ մարդերը այնպէս են յարմարեցրած լինում, որ զրանցում ջուրը լծանայ հաւասարապէս: Այդ լծացած մարդերում չալտուկը երեք օր մնալով՝ տակ է նստում. այդ ժամանակ ջուրը կտրւում են. այս շարունակվում է մինչև արմատ բռնելը, երբ նորից բաց են թողնում ջուրը և, սովորաբար 40 օր, շարունակ վերան պահում:

40 օր անցնելուց յետոյ, երբ արդէն հասկերը բաւականին բարցրացած են լինում, նորից կըտ-

բացրել է մայրենի լեզուի տեղ և այդ ամենից ցետոյ ոչ թէ ուսուցչին պիտի մեղադրել ուսա- նող երեխաների այդ տեսակ միջոցներ համար, այլ պէտք է աչքի առջև ունենալ յիշեալ հիմ- նական պատճառները:

Մենք ահա երրորդ անգամն է, որ Գորի քա- ղաքն ենք դալիս և մեծ ուրախութեամբ պէտք է տեսնել, որ տեղիս հայ հասարակութիւնը բաւա- կան առաջադիմութիւն է արել մայրենի լեզուի վերաբերմամբ. այն ինչ 1886 թականին մեզ շատ դժուարութեամբ էր աշուղտում հասարակ օ- բերում մի հայախօս մարդու հանդիպել, այժմ համեմատելով ինձ հետ գնանք Գորու որ փողոցը ու- ղում էր, և դուր անպատճառ քիչ թէ շատ հա- յախօս մարդու կարող էր հանդիպել և ձեր միտ- լքը քաղցրահնչուն մայրենի բարբառով նրան հասկացնել: Պէտք է աւելացնել և այն, որ Գորու մէջ հայախօսութեամբ մի կողմից էլ զարկ տուե- ցին հայկական աշխարհից Գորի եկած հայ զին- տերները:

Բայց չը նայած այդ բոլորին, թէ ընտանի- ջում, թէ այլ և այլ հասարակական և ընկերա- կան շրջաններում ու զրօններում ժամանակ դար- ձեալ գործից հայ մարդիկ, ինչպէս սովորութիւն ունեն, վրացներէն են խօսում, որոնցից շատերը նոյն իսկ քիչ թէ շատ հայերէն խօսել չը գիտեն, որ, ի հարկէ, մեր այդ արեւնակիցնե- րին պատիւ չէ բերում. միւս կողմից այդ էլ կարելի է հետեանք համարել շրջապատող հա- զամանքների: Անկասկած այդ ժամանակով կը վերանայ իբրև մի հնութիւն, եթէ մեր գործից արեւնակիցները, մանաւանդ խելահաս մասը դի- մեն աւելի արմատական միջոցներ մայրենի լե- ճուին ընտելանալու այնպէս, ինչպէս ընտելացած են վրացներէն:

Մենք վերև ասեցինք, որ մայրենի լեզու սովո- բերուն ամենից շատ ցանկութիւն է ցոյց տալիս երիտասարդութիւնը և այդ իսկ ցանկութեամբ բաւականութիւն տալու համար իբրև ամենագո- բաւոր միջոց կարող է լինել գրադարան-ընթեր- ցարանը, որը հիմնելու համար պէտք է ամենից շատ աշխատեն մեր ուսուցիչները, իբրև լուսա- ւորութեան գործին նուիրվածներ, Գորու հայ ե- րիտասարդներից քաջաբերկաւ:

Մենք կարծում ենք, որ Գորու հայ երիտա- սարդներ խելահաս մասը, հասկանալով գրադա- րան-ընթերցարանի օգտակարութիւնը, ամեն կեր- պով կը նպաստէ այն անձանց, որոնք պարա- գլուխ կը հանդիսանան Գորու մէջ մի գրադա- րան-ընթերցարան հիմնելու գործում, որը մատ- չելի կը լինի, ինչպէս հայերին, նոյնպէս էլ այլ- ազգիներին:

Գորու հասկացող դասը պէտք է խմանայ, որ

ժամանակ է ստորին դասակարգին ճանապարհ- ցոյց տալու, որպէս զի, եթէ ոչ հիմա, գոնէ ժա- մանակով, նա թողնէ այժման իր դէպի արեցող- լութիւն ու չուայութիւն տանող հանդիման ու դի- մէ դէպի լուսաւորութիւն և այդ բանին կարող է նպաստել գրադարան-ընթերցարանը: Մի խօսքով Գորու մէջ հիմնվելու գրադարան-ընթերցարանը կը լինի թէ մասնաւորապէս հայերի մէջ մայրենի լեզու տարածող և թէ ընդհանրապէս լուսաւո- րութեան ճառագայթներ սփռող:

Գրադարան-ընթերցարանը անկասկած սկզբից կունենայ քիչ յաճախողներ, բայց փոքր առ փոքր կը զբաւէ դէպի իրան Գորու թաղի երիտասարդնե- րին ու կը սերմանէ մայրենի լեզուի ամենաան- հրաժեշտ սերմերը հայ սրտերում, որոնք աճելով և ծաղկելով ժամանակով, կը տան այն բարի պտուղները, որոնց վայելելու համար մենք Գորե- ցի հայերին ցանկանում ենք կատարեալ աշուղտ- թիւն, այսինքն հայախօսութիւն թէ հայ ընտա- նիքներում, թէ հասարակական այլ և այլ շըր- ջաններում և այլն, և այդ ամենից ցետոյ Գորու ծխական դպրոցները խելապէս կը տան այն ա- հաբիւն օգուտները, որոնք նոյն չափով ներկայ հանգամանքների տակ չեն ստացվում:

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑԻ, որ մի հայ երիտասարդ ղեկավարութիւն ունի հրատարակել Պետերբուրգում մի հայերէն շաբաթաթերթ և դրա համար դիմել է կառավարութեանը թույլ- տութիւն ստանալու համար:

Իրիւթիւն մեզ գրում են նոյններին 2-ից, որ եղանակը այդտեղ զգալի կերպով ցրտել է և մո- տակայ տարերը ծածկվել են ձիւնով: Աշնանային մանր անձրևները փոքր առ փոքր անտանելի են դարձնում գիւղի մէջ անցուդարձը:

Մեզ գրում են Իրիւթիւն հետեւեալը: «Մեր դպրոցին հասանելի 1885/86 ուսումնական տար- վայ կշռողից քոյացած 525 բուրլի դուստրը, ո- լը մինչև այժմ գտնվում էր արքունի դանձարա- նում, ինչպէս լսում ենք, շուտով պիտի յանձնվի ուսումնարանին»:

Մեզ գրում են ԱՐԴԱՆԻՑԻ, որ այդտեղ ձիւ- նը սկսել է արդէն անդադար գալ և սարերը ար- դէն ծածկված են սպիտակ մուշտակով: Հոկտեմ- բեր ամսից արդէն բացվել է փոստային հաղոր- դակցութիւնը Արդահանից դէպի Կարս և Ախալ-

քալաք: Կենսական պիտոյքների գները Արդահա- նում օրից օր բարձրանում են:

Մեզ հաղորդում են, որ Արդահանի Ս. Վարդա- նեան դպրոցի հոգաբարձութիւնը դիմել է թիֆ- լիսի հայոց Բարեգործական և Բազուի Մարդա- սիրական ընկերութիւններին, խնդրելով դրամա- կան օժանդակութիւն դպրոցի համար: Հոգաբար- ձութիւնը յոյս ունի որ վերոյիշեալ ընկերութիւն- ները կը յարգեն այդ խնդիրը, ի նկատի ունենա- լով որ Արդահանի պէս մի յեղեղեալ տեղում մի կանոնաւոր հայոց դպրոց պահպանելու նրանք կը նպաստեն ապագայում դործի աշուղտիւն, մեծ օգուտներ տալով հայ գաղթական ժողովրդի լուսաւորութեան գործին:

«Աղբիւր» ամսագրի վերջին համարի հետ հրա- տարակված «Ներքորդ բաժինը» որը յատկացրած է մանկավարժներին և ծնողներին, այս անգամ բաղկացած է ընդամենը երեք երեսից: Այդ ու- րախալի և ցանկալի չէ, քանի որ մեր մանկա- կան հրատարակութեան այդ բաժինը ներկայումս դուրս մանկավարժական և իր պրօգրամին աւելի աստիկ բաղմամբիւ հարցեր ունի մշակելու և ար- ծարծելու: Անհրաժեշտ է այդ բաժնի վրա ևս առանձին ուշադրութիւն դարձնել, քանի որ դա էլ շատ կը նպաստի ամսագրի գործունէութեան աշուղտիւնը:

«Русская Мысль» ամսագրի ներկայ թիւի հոկ- տեմբերի համարի մատենագրական բաժնում տպված է գեներալ Աբաղյանի «История Арменія» (Հայաստանի պատմութիւն) գրքի կարճատե- քնագրատութիւնը:

Բազուից գրում են «Աղբիւրին» որ բազուա- ընակ դարաբաղցիների մի նշանաւոր մասը վրձ- ուն է Ս. Գանձասարի աթոռի համար խոշոր գումար ժողովել և ընկած աթոռը ծաղկեցնել:

ԹԱԽԻՐԶԻՑ գրում են հետեւեալ արտասահմա- նի հայոց մի քաղաքին. «Կաթօլիկական պրօպա- գանդան ևս իր ոտը կոխեց այստեղի Հայերի մէջ. յառաջիկայ 1889 թ-ին պէտք է նստի Գալ- բէժում կաթօլիկների եպիսկոպոսը, որ պէտք է գալ Գալբէժէն Լուր կայ թէ 90,000 բուրլի դրեր է պապը, միմիայն եպիսկոպոսարանի, եկեղեցու և ուսումնարանի շէնքերն գնելու համար: Առ այժմ եպիսկոպոսարանի համար մի հայի տուն գնված է 7500 բուրլու արժողութեամբ. իսկ հետզհետէ կառնեն տեղեր եկեղեցու և ուսում- նարանի համար»:

Ջուր լաստերի վրա են լինում. ապա իջնելով են յատակի վրա: Այս տեղափոխութեան ժամա- նակ տալիք մաքրում են, և այլ ևս ձեռք չեն տալիս մինչև բոժոժ անելը: Առաջներում սովո- րաբար օրեկան երկու անգամ են կերակրում, վերջերում, 3 կամ 4 անգամ միմիայն ցերեկը, ի հարկէ,...

Սաստիկ ղոգոհութիւն են յայտնում ժապոնի սերմի դէմ. խօրասանի սերմը առանձին զօհու- նակութեամբ է յիշվում:

Լա սերմի կարևորութիւնը, տեղի, պահպանե- լու մեծ նշանակութիւնը չեն ուրանում:

Շերամպապոթիւն նոր եղանակի վրա խօսե- լիս, օգտակարութիւնը բացատրելիս, նրանք մի- միայն մի պատասխան են տալիս. «Եթէ այդպէս խնամելու լինենք, էլ ուրիշ գործով չը պիտի պարագլխենք»... Նոր եղանակից չեն խորշում, հաւատում են, որ եթէ իրանք չըբամով այդ- քան մանրակրկիտ կերպով զբաղվելու լինեն, ցանկալի կերպով կը շահվեն, բայց... Եթէ բացա- տրում են՝ 1 1/2 ամիս ամբողջապէս չըբամպա- հոթեան նուիրվելով՝ նրանք առաւել շահված կը լինեն, քան թէ «ուրիշ գործի» համար ժամանակ գործ դնելով՝ նրանք լսում են և «մենք մշակ ենք, չը դիտենք. ինչ անենք»,— իրաւացի պա- տասխանով արդարանում...

Վերոյիշեալ գիւտերի արդւնաբերութեան մի գործը ձիւղը՝ շերամպապոթիւնը, արդէն ինչ- պէս յայտնի է, այսօր օրհասական դրութեան մէջ է:

Միաց երկրագործութիւնը՝ ցորենը, դարին, չալտուկը և այլն. սա նոյնքան միսթարական չէ. միսթարական չը լինելը պիտի վերադրել հողի ու ջրի սակաւութեանը: Հողի ու ջրի սակաւու- թեան զանգատը այդ բոլոր գիւղերում ընդհա-

«Медицинск. Бесѣда» շաբաթաթերթը հաղոր- դում է որ աղբային լուսաւորութեան միսթարա- րութիւնը հարց է առաջարկել Գորպատի համա- լասարանի խորհրդին՝ արդե՞ք յարմար է գտնում խորհուրդը աշարվանից մտցնել յիշեալ համա- լասարանի մէջ՝ նոր համալսարանական կանոնադ- րութիւնը: Սակայն խորհուրդը պատասխանել է որ դեռ ևս տարաժամ է գտնում Գորպատի հա- մալսարանում՝ նոր կանոնադրութեան մտցնելը, աւելացնելով որ այդ կանոնադրութեան գործա- դրութիւնը կարող է տեղի ունենալ միմիայն 5 տարուց յետոյ:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը «ԱՐԴԱՆԻՑԻ» միջոցաւ արական «Ս. Վարդանեան» հոգևոր դպրոցը ունի մի նորակալով գրադարան, որտեղ գտնվում են միայն 47 հատ կրօնական գրքեր, որոնց իբրև հիմք գրադարանին, ընծայել է վե- հափառ Կաթօլիկոսը: Գրադարանը նիւթական միջոցից գուրկ լինելով անկարող է ընթերցա- նութեան արժանի գրքեր ձեռք բերել: Ուստի դպրոցիս հոգաբարձութիւնը, ի նկատի ունենալով տեղական չքաւոր գաղթական ժողովրդի ընթեր- ցանութեան պահանջը, պատիւ ունի խոնարհա- բար խնդրել բոլոր հայ բանասէրներին, մանկա- վարժներին, թարգմանիչներին, բժշկներին և զա- նազան ուսումնական ձեւերի մասնագէտներին՝ բարեհաճել մի մի օրինակ իրանց գրքերից դնել յօղոտ չքաւոր գրադարանիս, որով կենդանա- ցրած կը լինեն մեր անկեալ գրադարանը և յա- ղեցրած կը լինեն ժողովրդի ընթերցանութեան ծաւալը:

ԱՐԴԱՆԻՑԻ մեզ գրում են. «Տեղիս դպրոցը բացվել է 1887/8 տարեշրջանում. դպրոցի դե- րութիւնը հէնց սկզբից աննախանձելի էր, իր նիւթական միջոցների սղութեան պատճառով: Նա շատ պակասութիւններ ունի հոգաւու- բայց աղբիւրներ չունի և եղածներն էլ շատ չնչին են: Եօգուտ դպրոցի ոչ վիճակաւի է լի- նում, ոչ ներկայացուցներ և ոչ ուսուցիչներ կան, որոնք քիչ թէ շատ օգնէին: Եւ եթէ այս ամենը ի նկատի ունենանք, կը տեսնենք որ ար- դարև շատ ծանր է հոգաբարձութեան համար երկու ուսուցչի վարձ տալ, և ուրիշ պիտոյքներ հոգալ: Նոյն իսկ հոգաբարձուներ անգամ չը կան այժմ, որովհետև նրանցից մէկը արդէն քաղաքից հեռու է և ոչ մի գործի ձեռնամուխ չէ լինում, իսկ միւսը այս երկու ամիս է որ հեռացել է իր պաշտօնից, և նրա տեղը նշանակված էր եկեղեցու երեցիփոխան պ. Վարդապետեան. սա էլ զգաղ- դաբար փոխադրվեց Կարս պաշտօնով: Հասկա-

նուր է: Գիւղացին պարագլ չէ նստում, նա աշ- խատում է. առաւօտից մինչև երեկոյ տանջվում, չարչարվում է, բայց մի օր և է գոհացուցիչ հե- տեանքի չէ հասնում...

Ցաւելով որ առ այժմ անկարող եմ վիճակա- գրական ճիշդ թուանշաններով խօսել ընակիչնե- րի արդիւնաբերութեան ու կարիքի՝ ծախքի մուտքի մասին, ստիպված եմ շատանալ նրանց կեցութեան մի քանի կողմերով:

Նեմաթապատ գիւղի (150 տուն թուրք, 60 տուն հայ) հայերից 30 տուն արդէն հեռու են գաղթել բէգի հողերը. պայմանը բէգի հետ կապ- ված է. իմ այնտեղ եղած ժամանակ, տեղափոխ- վելու պատրաստութիւն տեսնվում էր. միակ պատճառը՝ հողի անբերութեան մէջն է ամփոփ- վում: «Տուններս չենք կարողանում պահել. ծախս- ներս շատ է»— կրկնվում է անդադար: Նեմա- թապատում համեմատաբար վարելահողը շատ է, բայց անբերելի. կէս արշինաչափ գետինը փորե- լուց՝ ջուր է դուրս գալիս: Երմանի բազար գիւ- ղում նոյնպէս գտնաւորվում են հողի սակաւու- թեան և վատութեան վրա: Նոյն տեղում երկ- րորդ տարին անկարելի է լինում ցանել. ամենա- առատ ժամանակը— մէկին 5—6 է տալիս Այս- տեղ այդ անյարմարութեան առաջն տեսնված է լինում մասամբ. մօտիկ բէգերի վարելատեղեր կան, ժողովուրդը օգտվում է սրանցից: Բէգը իր վարելահողերի ու ջրի փոխարէն վերցնում է ար- դիւրի 1/6 մասը, իսկ չալտուկի տեղի արդիւնքը կիսվում է. կէսը հոգաւորին է վերցնում, կէսը մշակողը:

(Կը շարունակվի)

Օրինակ, մի տան մէջ երեք—չորս չափահաս եղբայրներ կան. եթէ երկու հարկատու եղբայրների ստացած հոգաբաժնով կարողանում են կառա- վարվել, այն ժամանակ թէկուզ երրորդ եղբայ- րը 20—25 տարեկան լինի, հարկատու չէ դարձն- վում, հոգաբաժնի չէ ստանում: Ընդհակառակը, այն բաղմանում ընտանիքներում, ուր կառավար- վելը դժուար է լինում, 12—15 տարեկան պա- տանուն էլ հարկատու են անում. բաւական է, որ բաժ, թի բունը խմանալ, ինչպէս սովորաբար ասում են իրանք գիւղացիք:

Բացի հարկատուներից հոգաբաժնի են ստա- նում նաև գիւղի տանուտէրը ու քահանան: Եր- բեմն իբրև բացառութիւն, առանց քուէարկու- թեան, դրանց բաժինը որոշվում է այն տեղից, որտեղից իրանք են ցանկանում, բայց սովորա- բար այդ քուէարկութեամբ է լինում:

Խրաքանչիւր տարի ժողովուրդը պարտաւոր է վարի ու հոռնի ժամանակ մի մի օր ձրի աշ- խատել տանուտէրի և քահանայի համար: Իբրև վարձատրութիւն ժողովրդի ձրի աշխատանքի, նրանք յիշեալ օրերում հիւրասիրում, ճաշ են տա- լիս ժողովրդին:

Ցանուտէրը երեք տարով է ընտրվում: Այն գիւղում, ուր բնակիչների մեծամասնութիւնը հայ է, գլխաւոր տանուտէրը հայերից է ընտրվում, իսկ օգնականը թուրքերից. հակառակ դէպքում ընդհակառակն է լինում: Գլխաւոր տանուտէրը ընտրվում է խառն ժողովով՝ հայերի ու թուրքե- րի ձայների բաղմութեամբ, կամ գաղտնի քուէ- արկութեամբ: Ցանուտէրի օգնական ընտրելու ժամանակ ամբողջ ժողովուրդը չէ մասնակցում. եթէ հայերից է՝ միայն հայերն են մասնակցում, իսկ եթէ թուրքերից՝ թուրքերը:

Այդգործութեան բերքերից գլխաւոր տեղը

բունում են խաղողը, որ բաւական կանոնաւոր կերպով է մշակվում, սերկերը, նուռը և տան- ձը:

Շերամպապոթիւնը կատարվում է յատուկ պատրաստած եղեգնեայ սենեակներում: Բոլորե- քան՝ թէ թուրք, թէ հայ, համարեա առանց բա- ցառութեան, չըբամ են պահում: Ամենայն տեղ ժապոնի սերմն է. սերմը իրանք են պատրաս- տում. ուրիշներից սերմ վերցնող աները շատ ան- նշան են. վերցնվում է այն պայմանով՝ որ ար- դիւրի մի մասը սերմատիրով լինի, իսկ երկու մասը իրան:

Ներութիւնները դուր անցած չը լինելու հա- մար, դիտվութեամբ մեծ քանակութեամբ են պա- հում սերմը, որպէս զի, օրքան կոտորվելու, փա- նալու լինի, այնու ամենայնիւ տակին մի բան մնայ... Այս սկզբնականով առաջնորդվելով՝ որքան ուղղում են, այնքան էլ պահում են, 1/2 ֆունտից սկսած մինչև 2—3 ֆունտ, և այդքան քանա- կութեան որդերը տեղաւորում են 2—3 միջակ սենեակներում:

Նեմաթապատում՝ իմ եղած տանը, 1 1/2 ֆունտ սերմ էին հանել. այդ բոլորը պիտի տեղաւորէին երեք սենեակում, ուր 20—25 միջակ հաղիւ թէ կարելի լինէր կանոնաւոր պահել: Այս աչքի ընկ- նող խոշոր անյարմարութիւնը ընդհանուր է:

Բացի սրանից եղեգնեայ սենեակները լաւ չեն ամբարցնում: Երբեմն տաքացնելու համար շերա- մատները վառում են. ծխնելոյր չը կայ, ուստի ծուխը ամբողջապէս մէջն է մնում...

Անկողնում, ծոցերում, արեւի տակ սերմը տա- քացնելով՝ հանում են որդներ և դնում նախօրէն պատրաստած եղեգնեայ լաստերի վրա. վերջին- ներս, յատակից մի արշին բարձրութեամբ, դըր- ված են լինում ցիցերի վրա: Որդները մինչև երեք

